ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

հոկտեմբերի 2021 թվականի № Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի №24Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԼԷ №0636 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՈՒՄԸ ՖՈՐՍ ՄԱԺՈՐԻ ՀԵՏԵՎԱՆՔ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2021 թվականի սեպտեմբերի 29-ի գրությամբ «ԱՐՄՓԱՈՒԵՐ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով երկարաձգել Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 13-ի №24Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0636 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0636 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգել մինչև 2021 թվականի դեկտեմբերի 27-ը: Ընկերությունը նշել է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 1-ի №1297-Ա որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում՝ Երևան քաղաքի տարածքում 250 ՄՎտ գազային վառելիքով կոմբինացված ցիկլով էլեկտրակայան նախագծելու, զարգացնելու, ֆինանսավորելու, կառուցելու, սեփականության իրավունքով տիրապերելու, գործարկելու և պահպանելու վերաբերյալ փոփոխված և վերաշարադրված շրջանակային համաձայնագրի (այսուհետ՝ Շրջանակային համաձայնագիր) հետաձգող պայմանները պետք է բավարարվեին և ֆինանսական ամփոփումը պետք է տեղի ունենար Շրջանակային համաձայնագրի ստորագրման ամսաթվից 60 օր անց, նախատեսված կոմերցիոն շահագործման ամսաթիվը (այսուհետ՝ ԿՇԱ) սահմանվել էր որպես հետաձգող պայմանների

վերջնաժամկետից 750 օր անց ընկած ամսաթիվը, իսկ ԿՇԱ վերջնաժամկետը որպես ԿՇԱ-ից 90 օր անց ընկած օրը: Սակայն կողմերի պատասխանատվության ներքո չգտնվող հանգամանքներով պայմանավորված՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ հետաձգող պայմանների և ֆինանսական ամփոփման վերջնաժամկետները հետաձգվել են: Այդուհետև, հաշվի առնելով 2020 թվականին տեղի ունեցած անհաղթահարելի ուժի իրադարձությունները, որոնք ազդել են ծրագրի ժամանակացույցի վրա (հատկապես՝ COVID-19 համավարակի բռնկումը), 2021 թվականի ապրիլի 22-ին Շրջանակային համաձայնագրի կողմերը կնքել են նրանում փոփոխություններ կատարելու մասին №2 համաձայնագիրը, որով ԿՇԱ է սահմանվել 2021 թվականի օգոստոսի 24-ը, իսկ ԿՇԱ վերջնաժամկետ՝ 2021 թվականի նոյեմբերի 22-ը: Սակայն, փոփոխություններ կատարելու №2 համաձայնագիրը ստորագրելուց հետո ի հայտ են եկել որոշ անբարենպաստ իրադարձություններ, որոնք ազդել են կամ անխուսափելիորեն ազդելու են ծրագրի ժամանակացույցի վրա: Կառուցապատողի և նրա կապալառուների վերահսկողությունից դուրս գտնվող հանգամանքների պատճառով հնարավոր չի եղել նախատեսված ժամկետներում ապահովել Կայանի միացումը հաղորդման ցանցի 220 կՎ «ԵրՋԷԿ-1» և 220 կՎ «Նաիրի» օդային գծերին, շինհավաքակցման աշխատանքների իրականացման պատճառով «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերությունը հոկտեմբերի 3-18-ը չի կարողանա ապահովել կառուցապատողի գազամատակարարումը: Նշված անբարենպաստ իրադարձությունների կապակցությամբ կառուցապատողը դիմել է Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ առաջարկելով Շրջանակային համաձայնագրով սահմանված ԿՇԱ-ն 35 օրով հետաձգել՝ սահմանելով այն 2021 թվականի սեպտեմբերի 28-ը: Առաջարկված փոփոխության արդյունքում ԿՇԱ վերջնաժամկետը կլինի 2021 թվականի դեկտեմբերի 27-ը,

բ) Ընկերությունը, ի լրումն նշված գրության, սույն թվականի հոկտեմբերի 4-ի №113/21, №113Ա/21, հոկտեմբերի 6-ի №109/21 և հոկտեմբերի 7-ի №120/21 գրություններով ներկայացրել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 30-ի №1610-Ա որոշման, Շրջանակային համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին №2 և №3 համաձայնագրերի պատճենները, և խնդրել իր կողմից և համապատասխան համաձայնագրերում նշված հանգամանքները ճանաչել ֆորս մաժոր: Ընկերությունը Կայանի կառուցման իր պարտավորությանը խոչընդոտող հանգամանքների, այդ թվում՝ 2020 թվականին տեղի ունեցած ռազմական

գործողությունների ազդեցության մասին հայտնել է նաև Հանձնաժողովին ուղղված 2020 թվականի փետրվարի 5-ի №02/20, փետրվարի 6-ի №04/20, փետրվարի 28-ի №10/20, մարտի 16-ի №13/20, մարտի 24-ի №16/20, հոկտեմբերի 12-ի №60/20, 2021 թվականի հունիսի 25-ի №68/21 և օգոստոսի 23-ի №97/21 գրություններով,

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 30-ի №1610Ա որոշման՝

- 1-ին կետով հավանություն է տրվել Շրջանակային համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրին,
- 3-րդ կետով համաձայնություն է տրվել Հանձնաժողովի կողմից ԼԷ№0636 լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածը ԿՇԱ վերջնաժամկետին համապատասխանեցնելուն,
- 4-րդ կետով առաջարկվել է Հանձնաժողովին՝ Կայանը հաղորդման ցանցին միացնելու և Կայանը գազով ապահովելու ժամանակավոր անհնարինությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 4-ի №273-Ա որոշման հավելվածում նշված անհաղթահարելի ուժի իրադարձությունները (COVID-19) ճանաչել որպես համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էլեկտրակայանում (Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի վարչական տարածք) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ N0636 լիցենզիայի պայմաններով սահմանված կառուցապատման ժամկետում պարտավորությունների կատարմանը խոչընդոտող գործողություն՝ ֆորս մաժոր, և չկիրառել տուգանային պայմանները,

դ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 30-ի №1610Ա որոշման համաձայն ստորագրված Շրջանակային համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին №3 համաձայնագրով նախատեսված ԿՇԱ-ն ամրագրվել է 2021 թվականի սեպտեմբերի 28-ը, ինչի արդյունքում ԿՇԱ վերջնաժամկետը՝ Շրջանակային համաձայնագրի համաձայն, ամրագրվում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 27-ը,

ե) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի №3 հավելվածի ՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 7-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե որոշում է ընդունել արտադրության լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգելու մասին,
- 10-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Կարգի իմաստով ֆորս մաժոր է համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին՝
  1) չի գտնվում լիցենզավորված անձի վերահսկողության ներքո.
  2) լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար.

զ) Ընկերության կողմից ԼԷ №0636 լիցենզիայով ամրագրված պարտավորությունների պատշաճ կատարման ապահովման նպատակով Հանձնաժողով ներկայացված «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի օգոստոսի 22-ի №O.AB.100.12CIB.PIED.0.8908.19 գրությամբ տրամադրված բանկային երաշխիքի գործողության ժամկետը 2022 թվականի հունիսի 10-ն է,

է) ուսումնասիրելով առկա փաստական հանգամանքները, Հանձնաժողովի գնահատմամբ, ԼԷ№0636 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման ժամանակահատվածը ենթակա է երկարաձգման Ընկերության կողմից հայցվող ժամկետով՝ մինչև սույն թվականի դեկտեմբերի 27-ը, ճշգրտելով նաև արտադրության ժամանակահատվածը, իսկ Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ենթակա չէ փոխանցման, քանի որ Ընկերության կողմից ԼԷ№0636 լիցենզիայի պայմանների

չկատարումը հետևանք է ֆորս մաժորի: Մասնավորապես, Ընկերության կողմից Կայանի կառուցման աշխատանքները սահմանված ժամկետում ավարտելուն խոչընդոտել են 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 9-ը Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից ձեռնարկված ռազմական գործողությունների պատճառով երկրում հայտարարված ռազմական դրությունը և ընդհանուր զորահավաքը, դրանցով պայմանավորված անհաղթահարելի տեխնիկական խնդիրները և Կայանի շինարարության աշխատանքներին ներգրավված աշխատակիցների զորակոչման հանգամանքը, որոնք որևէ կերպ չէին կարող գտնվել Ընկերության վերահսկողության ներքո կամ կանխվել վերջինիս կողմից: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 30-ի №1610Ա որոշման ընդունման հիմնավորմամբ հավաստվել է, որ 2021 թվականի օգոստոսի 10-ի դրությամբ փաստացի ավարտվել են Կայանի շենքերի, շինությունների կառուցումը և անհրաժեշտ սարքավորումների տեղադրումը, և հունիսի 4-ից իրականացվում են շահագործման հանձնելու փորձարկումները: Սակայն ի հայտ է եկել հաղորդման ցանցի հետ կապված անբարենպաստ պայմանի իրադարձություն, որը խոչընդոտել է ժամանակացույցին համապատասխան փորձարկումների իրականացումը: Մասնավորապես, խնդիրը պայմանավորված է եղել «Հյուսիս-հարավ» ճանապարհային միջանցքի կառուցման աշխատանքներով, ինչպես նաև «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2021-2025 թվականների ներդրումային ծրագրի շրջանակում իրականացվող «Երևանի Գազաբաշխիչ Կայան-2»-ի հիմնանորոգման աշխատանքներով, որոնք դուրս են Ընկերության և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության վերահսկողությունից: Նշված հանգամանքները Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, ըստ էության, գնահատվել են նաև որպես Կարգի իմաստով ֆորսմաժորային իրադարձություններ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ Կարգի 10-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկարաձգել Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 13-ի «ԱՐՄՓԱՈՒԵՐ» փակ բաժնետիրական ընկերությանը համակցված շոգեգազային ցիկլով

աշխատող էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №24Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0636 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման ժամանակահատվածը, ճշգրտելով նաև արտադրության ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2021 թվականի հոկտեմբերի 14-ը» բառերը փոխարինելով «մինչև 2021 թվականի դեկտեմբերի 27-ը» բառերով, իսկ «մինչև 2046 թվականի հոկտեմբերի 14-ը» բառերը՝ «մինչև 2046 թվականի դեկտեմբերի 27-ը» բառերով:

2. Ընկերության կողմից ԼԷ №0636 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածում Կայանի կառուցման աշխատանքները չավարտելը համարել ֆորս մաժորի հետևանք և «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի օգոստոսի 22-ի №O.AB.100.12CIB.PIED.0.8908.19 գրությամբ տրամադրված բանկային երաշխիքով երաշխավորված գումարից պետական բյուջե գումար չփոխանցել:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հոկտեմբերի 14-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հոկտեմբերի 2021թ.